ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 17

09 Մարտի 2020 թվական

ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2020թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

Ավագանի որոշեց

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու <<Զոլաքար համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի կառուցում >>, << Զոլաքար համայնքում խմելու ջրի ներքին ցանցի կառուցում>>, <<Մշակույթի կենտրոնի վարչական շենքի ներքին հարդարում>> տնտեսական զարգացման ծրագրերը:
2. Սուբսիդիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել <<Զոլաքար համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի կառուցում >>, << Զոլաքար համայնքում խմելու ջրի ներքին ցանցի կառուցում>>, <<Մշակույթի կենտրոնի վարչական շենքի ներքին հարդարում>> տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման հայտերը:
3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2020թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ 2020թ. Մարտի 09-ից:

ավագանի՝ կողմ -8 դեմ՝-0

1, Հ.Ղազարյան 2. Ն.Գրիգորյան

3. Կ.Տոնոյան 4. Ն.Սիմոնյան

5. Ա.Պողոսյան 6. Հ.Գալստյան

7. Գ.Գրիգորյան 8. Ա.Գասպարյան

Զոլաքար համայնքի ղեկավար՝ Հ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 18

09 Մարտի 2020 թվական

Բնակչության հաշվառման արդյունքների մասին

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով

Ավագանի որոշեց

1. Համայնքի բնակիչների 2020թ. հունվարին անցկացված հաշվառման արդյունքների մասին տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Համայնքի ղեկավարի խնդիրն համարել բնակչության հաշվառումն իրականացնել յուրաքանչյուր տարվա հունվարին, իսկ արդյունքները օրենքով սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տարածքային ստորաբաժանմանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ավագանի կողմ -8 դեմ -0

1, Հ.Ղազարյան 2. Ն.Գրիգորյան

3. Կ.Տոնեյան 4. Ն.Սիմոնյան

5. Ա.Պողոսյան 6. Հ.Գալստյան

7. Գ.Գրիգորյան 8. Ա.Գասպարյան

Զոլաքար համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 19

09 Մարտի 2020 թվական

Նվիրաբերություն ընդունելու մասին

Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 14.11.2019թ. N 1575-Ա որոշումը 07.02.2020թ.-ին <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման>> ՕԻԳ ՊՀ-ի և Զոլաքարի համայնքապետարանի միջև կնքվել է նվիրաբերության պայմանագիր: Զեկուցողը նշեց, որ նվիրաբերության առարկա է հանդիսանում<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի ջրամատակարարման ներքին ցանցի վերակառուցում>> I, II, III, IV հատվածները 6509գծմ Պ/Էթիլենային խողովակ, որի ընդհանուր արժեքը կազմում է 20600220 (երկու հարյուր վեց միլիոն երկու հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամ (հիմք հանձն-անդունման արձանագրություն):

ՈԻստի առաջարկվում է համայնքի ավագանուն տալ հավանություն նշված պայմանագրին և 20600220 (երկու հարյուր վեց միլիոն երկու հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով նվիրաբերությամբ ստացված գույքը համայնքի հաշվեկշիռ ընդունելու և 01 գրքում հաշվառելու նպատակով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 14.11.2019թ. N 1575-Ա որոշումը և 07.02.2020թ. N1575-Ա պայմանագիրը

Ավագանին որոշեց

1. Հաստատել զեկուցողի առաջարկը և 20600220 (երկու հարյուր վեց միլիոն երկու հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով նվիրաբերությամբ ստացված <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի ջրամատակարարման ներքին ցանցի վերակառուցում>> I, II, III, IV հատվածները 6509գծմ Պ/Էթիլենային խողովակները ընդունել համայնքի հաշվեկշիռ:
2. Համայնքի ղեկավարի խնդիրն համարել սահմանված կարգով նվիրաբերությամբ ստացված գույքը ներառել համայնքապետարանի 01 գրքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի՝ կողմ -8 դեմ՝ -0

1. Հ.Ղազարյան 2. Ն.Գրիգորյան

3. Կ.Տոնոյան 4. Ն.Սիմոնյան

5. Ա.Պողոսյան

6. Հ.Գալստյան

7. Գ.Գրիգորյան

8. Ա.Գասպարյան

Զոլաքար համայնքի ղեկավար Ա.Ղազարյան